# ՐԱՖՖԻ

## Դիոս և էշեր

Մի օր էշերի՝ ամբողջ քարավան
Ղեպի Օլիմպոս ճանապարհ ընկան,
Եվ ստորոտից դիցական լերին
Այսպես զռալով ձայն արձակեցին.

Ո՜վ ամպրոպային արքա շանթառաք,
Մենք իսպառ եղանք խաղք ու խայտառակ,
Այդ ի՞նչ պատիժ էր դու մեզ տրվեցիր,
Որ «էշ» անունով մեզ մկրտեցիր:

Բավական չէ՞, որ մենք ամբողջ օրը
Կրում ենք մարդկանց աղբն ու փրսորը,
Եվ մեր մեջքերը մշտական բեռնից
Ազատ չեն երբեք անբուժ վերքերից:

Բայց վերքն ու բեռը, փալանն ահագին,
Շատ վիշտ չեն բերում մեր դառն վիճակին.
Անտանելի է ա՜յն ցավը սաստիկ,
Երբ «էշ» անունն են տալիս մեզ մարդիկ:

Այդ նախատական անարգ անունից
Մեր բեկված սիրտը խոցվում է խորքից,
Եվ մեր ականջներ, միշտ այդ լսելով,
Երկար ու երկար ձգվում են փութով:

Տուր մեզ նոր անուն, ինչ էլ որ լինի,
Շուն, գայլ կամ աղվես, ձի, խոզ կամ ջորի,
Միայն «էշ» անունից դու մեզ ազատիր,
Մեր աղերսանքին, ո՞վ տեր, ունկն դի՞ր:

Դիցական սարի գլխից ամպամած
Հզոր Դիոսի ձայնը որոտաց.
Ո՞ր երկրից եք, կամ ո՞ր տեղացի:
Պատասխանեցին. «Տե՞ր, …….ցի»:

Խնդաց Դիոսը, խինդն աստվածածին
Շարժեց Օլիմպի ամբողջ գագաթը:
Գնացե՞ք, ասաց, անվան փոխարեն
Լա՞վ է, որ փոխեք ձեր վատ խասիաթը:

Անվան պատճառով չէ, որ դուք եղաք
Մարդկանց աչքումը խաղք ու խայտառակ,
Այլ բարք ու վարքի անզուսպ կոպտություն
Խլեց ձեզանից պատիվ, բարություն: